ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 9-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀօրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝
Երանոս համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Երանոս համայնքի ավագանու 2021թվականի փետրվարի 26-ի N 2 արտահերթ նիստի օրակարգը՝

1)Երանոս համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
/Զեկ.՝ համայնքի ղեկավար՝ Ս. Բավեյան/

2) Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2020 թվականի հաշվետվությունը հաստատելու մասին
/Զեկ.՝ համայնքի ղեկավար՝ Ս. Բավեյան/

3)<<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման արդյունքում Երանոս համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 18-ի << 2021թվականի համար բնակավայրի կատեգորիայի և գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի աճուրդի և մրցույթի մեկնարկային գները սահմանելու մասին N 73-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
/Զեկ.՝ համայնքի ղեկավար՝ Ս. Բավեյան/

4)Դիմումի քննարկում
/Զեկ.՝ համայնքի ղեկավար՝ Ս. Բավեյան/

5) Երանոս համայնքի 2020թվականի ներքին աուդիտի տարեկան հաշվետվության քննարկում

/Զեկ.՝ համայնքի ղեկավար՝ Ս. Բավեյան/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՎԵՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՐԲԱՌՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՀԱՐԻԿՅԱՆ ՋԱՆԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԽԱԺԱԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՔՅԱՐԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 10-Ա

ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Երանոս համայնքի ավագանին որոշում է՝
1.Հաստատել Երանոս համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի՝

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՎԵՅԱՆ ԳԱԳԻԿ
ԲԱՐԲԱՌՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ
ՀԱՐԻԿՅԱՆ ՋԱՆԻԿ
ՂԱՋԱՐՅԱՆ ԽԱԺԱԿ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՔՅԱՐԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքի
ավագանու 2021թվականի փետրվարի 26-ի
N 10-Ա որոշման

Երանոս համայնքի 2020թ. բյուջեի եկամուտների կատարողականը

Եկամտատեսակ	Տարվա ճշտված պլան (հազ.դրամ)	Ամսվա կատարո-ղականը աճողական տեսքով (հազ.դրամ)	Փաստացին պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ	237,667.00	237,694.27	100.01%
ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ	11,161.80	11,275.17	101.02%
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԵՆՔԵՐ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	295.40	403.36	136.55%
ՀՈՂԻ ՀԱՐԿ	10,866.40	10,871.82	100.05%
ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ	26,000.00	26,157.86	100.61%
ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՓՈԽԱԴՐԱՄԻՋ. ՀԱՄԱՐ (ՖԻԶ. ԱՆՁ,>	26,000.00	26,157.86	100.61%
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	400.00	419.20	104.80%
20ՔՄ ԵՎ ԱՎԵԼԻ ՄԱԿ. ՇԻՆԱՐԱՐ. ԹՈՒՅԼՏՎ. ՀԱՄԱՐ	20.00	10.00	50.00%
ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏ. ՀԱՄԱՐ	180.00	209.20	116.22%
ՀԵՂ. ՎԱՌԵԼ., ՀԵՂՈՒԿԱՑՎ. ԳԱԶԵՐԻ ՎԱՃ. ԹՈՒՅԼՏ. ՀԱՄԱՐ	200.00	200.00	100.00%
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	183,818.10	183,271.71	99.70%
ՊԵՏ.Բ-ԻՑ ՖԻՆ. ՀԱՄԱՀԱՐԹ. ՄԿԶԲ-ՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎ. ԴՈՏԱՑ-ՆԵՐ	105,929.10	105,929.20	100.00%
ՊԵՏ. ԲՅ-ԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՅԼ ԴՈՏԱՑԻԱՆԵՐ	5,689.30	5,689.10	100.00%
ՊԵՏ. ԲՅ-ԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՆՊԱՏԱԿ. ՀԱՏԿԱՑ. (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)	72,199.70	71,653.41	99.24%
ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2,730.00	2,852.64	104.49%
ՀԱՄ. ՍԵՓ. ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ	2,000.00	2,113.64	105.68%
ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ՄՈՒՏՔԵՐ	730.00	739.00	101.23%
ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ	5,557.10	5,587.33	100.54%
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ	4,616.30	3,645.16	78.96%
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՎՃԱՐ	940.80	942.08	100.14%
ԻՆՔՆԱԿ.ԿԱՌՈՒՑՎ. ՇԵՆՔ-ՇԻՆ-ՐԻ ՕՐԻՆԱԿՆՑՄ. ՀԱՄԱՐ	0.00	1,000.09	0.00%
ՄՈՒՏՔԵՐ ՏՈՒՅԺԵՐԻՑ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻՑ	0.00	100.00	0.00%
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ	0.00	100.00	0.00%
3.8 ԿԱՊԻՏԱԼ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	8,000.00	8,000.00	100.00%
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ, ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ...	8,000.00	8,000.00	100.00%
ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	27,510.20	27,510.20	100.00%
ՎԱՐՉ.Բ-Ի ՊԱՀՈՒՍՏ. ՖՈՆԴԻՑ ՖՈՆԴ.ԲՅ. ԿԱՏԱՐՎ.ՀՏԿՑ-ԻՑ ՄՈՒՏՔ.	27,510.20	27,510.20	100.00%
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	0.00	30.37	0.00%

ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	0.00	30.37	0.00%
ԸՆԴԱՄԵՆԸ	237,667.00	237,694.27	100.01%

Երանոս համայնքի 2020թ. բյուջեի ծախսերի կատարողականը

Ծախսատեսակ / Հիմնարկ	Տարվա պլանը (դրամ)	Փաստացի ծախսը (դրամ))	Ծախսը պլանի նկատմամբ
ԸՆԴԱՄԵՆԸ՝	252274658.00	224356721.60	88.93 %
ԵՐԱՆՈՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ (900142122028)	58738500.00	48942417.00	83.32 %
(4111) - ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ	48861100.00	40617206.00	83.13 %
(4112) - ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՎՃԱՐՆԵՐ	1600000.00	1599462.00	99.97 %
(4212) - ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1500000.00	1430237.30	95.35 %
(4214) - ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	426000.00	321370.50	75.44 %
(4215) - ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	35000.00	29000.00	82.86 %
(4221) - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ	250000.00	0.00	0.00 %
(4232) - ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	371400.00	266400.00	71.73 %
(4234) - ՏԵՂԱԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	120000.00	120000.00	100.00 %
(4235) - ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	936000.00	936000.00	100.00 %
(4241) - ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	9000.00	8613.00	95.70 %
(4252) - ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ	700000.00	394400.00	56.34 %
(4261) - ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՀԱԳՈՒՍՏ	450000.00	447802.00	99.51 %
(4264) - ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ	1500000.00	981326.20	65.42 %
(4267) - ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ՆՅՈՒԹԵՐ	200000.00	200000.00	100.00 %
(5113) - ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ	1500000.00	1318600.00	87.91 %
(5122) - ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	200000.00	200000.00	100.00 %
(5134) - ՆԱԽԱԳԾԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	80000.00	72000.00	90.00 %
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆՏԵՐ,ԱԿՈՒՄԲՆԵՐ,ԿԵՆՏՐՈՆԵՐ (900142122093)	12730000.00	12351800.00	97.03 %
(4511) - ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	12730000.00	12351800.00	97.03 %
ԵՐԱՆՈՍԻ ԱՂԲԱՀԱՆՈՒՄ (900142122069)	4616300.00	4371300.00	94.69 %
(4511) - ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	4616300.00	4371300.00	94.69 %
ԵՐԱՆՈՍԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ (900142122085)	32841108.00	31938866.00	97.25 %
(4511) - ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	9408000.00	9408000.00	100.00 %
(5113) - ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ	22433108.00	21565866.00	96.13 %
(5133) - ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	200000.00	200000.00	100.00 %
(5134) - ՆԱԽԱԳԾԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	800000.00	765000.00	95.63 %
ԵՐԱՆՈՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ (900142122119)	2087300.00	0.00	0.00 %
(4891) - ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (ՎԱՐՉ. ԲՅ.)	2087300.00	0.00	0.00 %

ԵՐԱՆՈՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ (900142122051)	65217600.00	63248140.00	96.98 %
(4251) - ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ	4500000.00	3258852.00	72.42 %
(5112) - ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ	59417600.00	58729288.00	98.84 %
(5134) - ՆԱԽԱԳԾԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	1300000.00	1260000.00	96.92 %
ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԱՆՁԱՆՑ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ (900142122150)	3550000.00	3525000.00	99.30 %
(4729) - ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ	3550000.00	3525000.00	99.30 %
ԵՐԱՆՈՍԻ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ (900142122184)	800000.00	779500.00	97.44 %
(4251) - ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ	800000.00	779500.00	97.44 %
ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՄԱՔՐՈՒՄ (900142122044)	1500000.00	926850.00	61.79 %
(4239) - ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1500000.00	926850.00	61.79 %
ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ (900142122168)	1000000.00	372000.00	37.20 %
(4267) - ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ՆՅՈՒԹԵՐ	1000000.00	372000.00	37.20 %
ԵՐԱՆՈՍԻ ՀՈՂԵՐԻ ԱԳՐՈՔԻՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (900142122176)	100000.00	50000.00	50.00 %
(4241) - ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	100000.00	50000.00	50.00 %
ԵՐԱՆՈՍԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՄԱՎՈՐՈՒՄ (900142122077)	3300000.00	1881902.20	57.03 %
(4212) - ԷՆԵՐԳԵՏԻԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2500000.00	1154622.20	46.18 %
(4251) - ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ	800000.00	727280.00	90.91 %
ԵՐԱՆՈՍԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (900142122101)	59593850.00	52063846.40	87.36 %
(4267) - ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ՆՅՈՒԹԵՐ	250000.00	0.00	0.00 %
(4511) - ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	25885000.00	19126200.00	73.89 %
(4637) - ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	372000.00	372000.00	100.00 %
(4657) - ԱՅԼ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ , ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	1500000.00	1499800.00	99.99 %
(5113) - ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ	30586850.00	30100846.40	98.41 %
(5134) - ՆԱԽԱԳԾԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	1000000.00	965000.00	96.50 %
ԵՐԱՆՈՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (900142122135)	2250000.00	693900.00	30.84 %
(4234) - ՏԵՂԱԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	150000.00	0.00	0.00 %
(4241) - ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1200000.00	0.00	0.00 %
(4269) - ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ	600000.00	593900.00	98.98 %
(4819) - ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅԼ ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ	200000.00	100000.00	50.00 %
(4823) - ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ	100000.00	0.00	0.00 %
ԵՐԱՆՈՍԻ ՆԱՎԹԱՄԹԵՐՔ և ԲՆԱԿԱՆ ԳԱԶ (900142000885)	3950000.00	3211200.00	81.30 %
(5112) - ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ	3800000.00	3063200.00	80.61 %

(5134) - ՆԱԽԱԳԾԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	150000.00	148000.00	98.67 %
ԸՆԴԱՄԵՆԸ՝	252274658.00	224356721.60	88.93 %

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՍՊԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 11-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<< Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով՝
Երանոս համայնքի ավագանին որոշում է
1.Հաստատել Երանոս համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ 2020թվականի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՎԵՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՐԲԱՌՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՀԱՐԻԿՅԱՆ ՋԱՆԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԽԱԺԱԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՔՅԱՐԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ**

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքի
ավագանու 2021թվականի փետրվարի 26-ի
N 11-Ա որոշման

Երանոս համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանի ծրագրերի իրականացման մեջ նախատեսվածի համեմատ առկա են որոշակի շեղումներ:
Ընդ որում, առկա են ծրագրային պլանների ինչպես որոշ գերակատարումներ, այնպես էլ թերակատարումներ:Ստորև ներկայացված է ըստ առանձին ոլորտների իրականացված ծրագրերի ամփոփ նկարագրությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈԼՈՐՏ

Ոլորտում ՏԱՊ-ով նախատեսվում է իրականացնել «Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում» ծրագիրը, որի համար կատարվել են 49 636300 ՀՀ դրամի ծախսեր:Կատարվել են որոշակի կադրային փոփոխություններ,բարելավվել են աշխատակիցների աշխատանքային պայմանները: Սպասարկման ծառայությունների որակի բարձրացման համար շեշտադրվել է աշխատակազմի կարողությունների բարձրացումը:

Պատշաճ կերպով գործել է համայնքապետարանի պաշտոնական կայքը՝ «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը»: Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայությունը (http://www.yeranos.am) հնարավորություն է տալիս ավելի արագ և արդյունավետ կազմակերպել աշխատանքները,համայնքի բնակիչները հնարավորություն ունեն կայքի միջոցով ծանոթանալու համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններին, սպասարկման վճարներին, բյուջեից իրականացվող ծախսերին: Արդյունքում, նվազել է ստացվող դիմում-բողոքների քանակը:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության ոլորտում 2020 թվականի ընթացքում համայնքի բյուջեի միջոցներից իրականացվել է
<<Երանոս համայնքի մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի ամրացում և մասնակի հիմնանորոգում>> օբյեկտի ընդհանուր նախահաշվային արժեքը 31067850 ՀՀ դրամ ,
<<Երանոս համայնքի մի շարք փողոցների ասֆալտապատում>>օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝6-րդ փողոցում և 5-րդ փողոցի 2-րդ փակուղում-2079 քառակուսի մետր ճանապարհ,իջատեղ-188,6 քառակուսի մետր,4-րդ փողոցում-109 քառակուսի մետր ճանապարհ,7-րդ փողոցում-1744 քառակուսի մետր ճանապարհ,իջատեղ-48,9 քառակուսի

մետր,11-րդ փողոցում-1447 քառակուսի մետր ճանապարհ,իջատեղ-30,8 քառակուսի մետր ընդհանուր նախահաշվային արժեքը 59989288 ՀՀ դրամ:

<<Երանոս համայնքի խմելու ներտնտեսային ջրամատակարարման ցանցի՝3-րդ փողոցի սկզբնամասից մինչև 3-րդ փողոցի 7-րդ նրբանցքի թիվ 3 տան մոտի հատվածի,7-րդ փողոցի սկզբնամասից մինչև 7-րդ փողոցի թիվ 16 տան մոտի հատվածի հիմնանորոգում>> օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝3-րդ փողոցում և 3-րդ փողոցի 7-րդ նրբանցքում՝ Φ=219մմ տրամագծի մետաղական խողովակ-512մետր,

7-րդ փողոցում Φ=108 մմ տրամագծի մետաղական խողովակ-452 մետր,ընդհանուր նախահաշվային արժեքը 22530866 ՀՀ դրամ:

3. Հաշվետու տարում համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է <<Երանոս համայնքի նոր բնակելի թաղամասի նոր գազատարի կառուցում >> օբյեկտի հիմնական ցուցանիշներն են՝ 307 մետր φ=76 մմ մետաղական խողովակ,10 մետր φ=108 մետր մետաղական խողովակ ՝ընդհանուր նախահաշվային գումարը՝ 3211200 ՀՀ դրամ և <<Երանոսի համայնքապետարանի վարչական շենքի դռների ու պատուհանների փոխման,ներքին հարդարման ու վերանորոգման>>ընդհանուր նախահաշվային արժեքը 1397600 ՀՀ դրամ արժողությամբ շինարարական աշխատանքները:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏ

<<Հայաստանի Հանրապետության ցամաքային տարածքի դասակարգման կարգը հաստատելու մասին>>Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 11-ի N 431-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջի համաձայն, համայնքի ավագանու հետ համաձայնեցվել է համայնքի 2020 թվականի ցամաքային տարածքիդասակարգումը:

ՏՐԱՆՍՊՈՐՏԻՈԼՈՐՏ

2020թվականի տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների իրականացման համար համայնքում ճանապարհաշինության բնագավառում ծախսերի ծավալը կազմել է 62358.300 ՀՀ դրամ: Ոլորտային երեք նախատեսված ծրագրերն իրագործվելենամբողջությամբ.իրականացվելէ՝

1. <<Համայնքի 5-րդ,6-րդ,7-րդ և 11-րդ փողոցների ասֆալտապատում>> - 59989.300 ՀՀ դրամ
2. Ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգում 1956,000 ՀՀ դրամ
3. Ներհամայնքային ճանապարհների ձնամաքրման աշխատանքները 413,0 հազար ՀՀ դրամ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Երանոս համայնքում 2020 թվականին գործել է թվով 1 համայնքային ենթակայության

նախադպրոցական ուսումնական հաստատություն: ՆՈՒՀ-ի կրթական ծառայություններից օգտվել են 117 երեխաներ: Մանկապարտեզ հաճախող երեխաներից ծնողական վարձավճար չի գանձվում: Մանկապարտեզն ամբողջովին սուբսիդավորվում է համայնքի բյուջեից:

Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոցում բացվել է նախակրթարան,որի շինարարական աշխատանքների իրականացման համար համայնքի կողմից կատարվել է 1499800 ՀՀ դրամ ֆինանսական ներդրում և 837000 ՀՀ դրամի չափով համայնքի կողմից ֆինանսավորվել է նախակրթարանի դաստիարակի աշխատավարձը:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏ

Համայնքում գործում է <<Երանոսի մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ը, որի կազմում ընդգրկված է նաև համայնքային գրադարանը: Ոլորտում իրականացվող ծրագրերի նպատակը համայնքում մշակութային, մարզական և հոգևոր կյանքի աշխուժացումն է: Թեպետ համայնքի ֆինանսական հնարավորությունները չեն բավարարում գրքային ֆոնդը թարմացնելու և գրադարանային ծառայությունների մատուցման որակը բարձրացնելու համար, այնուհանդերձ, նկատվում է գրադարաններից օգտվողների թվի աճ: Գրադարանային ծառայություններից օգտվել են շուրջ 273 ընթերցող: Մշակույթի ոլորտում 2020 թվականի ընթացքում իրականացվել են պետական մշակութային քաղաքականությունից բխող տարաբնույթ միջոցառումներ՝կապված ՀՀ ազգային և պետական տոների,հոբելյանական նշանակության միջոցառումներ հետ:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏ

2020 թվականին համար ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ծրագրեր և միջոցառումներ նախատեսված չեն եղել:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2020 թվականի ընթացքում համայնքի բյուջեից սոցիալական աջակցություն են ստացել 125 սոցիալապես անապահով ընտանիքներ՝ 3525000/երեք միլիոն հինգ հարյուր քսանհինգ հազար / ՀՀ դրամի չափով: Ոլորտում տրամադրող ֆինանսական օգնությունը ունի կոնկրետ հասցեականություն,ուղղված համայնքի սոցիալապես անապահով խավերի՝ միայնակ թոշակառուների,հաշմանդամների, բազմազավակ ընտանիքների,ծերերի, զինծառայողներին, Արցախյան պատերազմին մասնակցած ժամկետային զինծառայողների, Արցախյան պատերազմին մասնակցած կամավորական և պահեստազորային անձանց սոցիալական վիճակի բարելավմանը:

ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՈԼՈՐՏ

Համայնքի ղեկավարը համայնքն սպասարկող անասնաբույժի միջոցով աջակցել է խոշոր և մանր եղջերավոր անասունների անասնահամաճարակային տարեկան միջոցառումների պետական ծրագրի իրականացման աշխատանքներին,աշխատակազմի կողմից կատարվել է համայնքի վարչական տարածքում բուսասանիտարիայի հաշվառման աշխատանքներին,

անհրաժեշտության դեպքում բուսասանիտարիայի բնագավառի լիազոր մարմնին է տրամադրում հողօգտագործողների վերաբերյալ տվյալներ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության ոլորտում իրականացվել են ՏԱՊ-ով նախատեսված դաշտամիջյան ճանապարհների հարթեցման ու բարեկարգման, ոռոգման առուների մաքրման աշխատանքներ,որոնց իրականացման համար ծախսվել է 1672,200 ՀՀ դրամ:

2020 թվականի մարտ ամսին համայնքապետարանի համակարգմամբ ձեռք է բերվել 35 տոննա ազոտական պարարտանյութ՝ 1 պարկի արժեքը 6500 ՀՀ դրամ և նույն արժեքով տրամադրվել է բնակչությանը:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2020 թվականի ընթացքում համայնքում ապահովվել են սանիտարահիգիենիկ բավարար պայմաններ:Համայնքում աղբահանության աշխատանքները կատարվել են ժամանակին, արդյունավետ ու կանոնավոր: Աղբահանության վճարների հավաքագրումը հաշվետու տարում կատարվել է 79 %-ով:

Կատարվել են դրենաժային ջրահեռացման ցանցի մաքրման աշխատանքներ,որոնց գումարային արժեքը կազմել է 926500 ՀՀ դրամ:

Համայնքապետարանն իր աշխատանքները կազմակերպել է համագործակցելով Գեղարքունիքի մարզպետարանի, ՀՀ տարբեր գերատեսչությունների, հումանիտար և հասարակական կազմակերպությունների հետ:

ՋԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Ոլորտում 2020 թվականի համար ՏԱՊ-ով միջոցառումներ նախատեսված չեն եղել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ՏԱՊ-ի պլանի կատարումը դիտարկելիս, կարելի է արձանագրել, որ համայնքի 2020 թվականի ՏԱՊ-ով սահմանված ծրագրերը հիմնականում իրականացվել են: Ծրագրերի իրականացման ընթացքը և ստացված արդյունքները դիտարկելիս, հստակ երևում է, որ համայնքում ծրագրերի իրականացման համար նախատեսված միջոցները ծախսվել են սահմանված նպատակներին համապատասխան, որոշ դեպքերում առկա են տնտեսումներ:Որոշ ծրագրեր անհնար է եղել իրականացնել՝ ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 12-Ա

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ) ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԳՆԱՀԱՏՄԱՆ (ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ) ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ՝ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԱԾԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N470-Ն, 1994ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի N462 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N 1101-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N1023-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ մասով՝
Երանոս համայնքի ավագանին որոշում է.

1.Երանոս համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 18-ի <<2021 թվականի համար բնակավայրի կատեգորիայի և գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի աճուրդի և մրցույթի մեկնարկային գները սահմանելու մասին>>73-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ ներկայացված առաջարկը մերժել:

2.Ընդունել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին ուղղված ուղերձ՝ համաձայն հավելվածի

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՎԵՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՐԲԱՌՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՀԱՐԻԿՅԱՆ ՋԱՆԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԽԱԺԱԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՔՅԱՐԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ

Հավելված

ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքի

ավագանու 2021 թվականի փետրվարի 26-ի

N 12-Ա որոշման

Հարգելի պարոն Սանոսյան

<<Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը, տարածագնահատման (գտնվելու վայրի)գոտիականության գործակիցները և սահմանները հաստատելու մասին>>Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 դեկտեմբերի 24-ի N1746-Ն որոշման համաձայն՝Մարտունու տարածաշրջանի Երանոս,Վարդաձոր,Ձորագյուղ,Ծակքար,Լիճք և Ներքին Գետաշեն սահմանակից համայնքները ընդգրկվել են XIII գոտու մեջ՝1 քառակուսի մետր հողամասի արժեքը սահմանվել է 342 դրամ(60000x0,0057=342):<<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2020 թվականի հունիսի 4-ին ընդունված <<Հայաստանի Հանրապետության հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) և շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության սահմանները,սահմանների կոորդինատներն ու տարածագնահատման գոտիականության քարտեզները սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N470-Ն,1994 թվականի սեպտեմբերի 28-ի N462 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և 2002 թվականի հուլիսի 25-ի N1101-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>>N 1023-Ն որոշումով՝ Երանոս և Ձորագյուղ համայնքները ընդգրկվել են տարածագնահատման(գտնվելու վայրի) 14-րդ գոտում՝1 քառակուսի մետր հողամասի արժեքը սահմանվել է 1221 դրամ (330000 x 0,00370 =1221),իսկ Վարդաձոր,Ծակքար,Լիճք և Ներքին Գետաշեն համայնքները ընդգրկվել են տարածագնահատման(գտնվելու վայրի) 15-րդ գոտում՝ 1քառակուսի մետր հողամասի արժեքը սահմանվել է 792 դրամ (330000x0,00240=792):

Մեզ համար անհայտ է,թե ինչ չափորոշիչների,հաշվարկների ու հիմնավորումների արդյունքում է,որ նախկինում միևնույն տարածագնահատման(գտնվելու վայրի) գոտում ընդգրկված սահմանակից վեց համայնքներից երկուսը՝ Երանոս ու Ձորագյուղ համայնքները ընդգրկվել են տարածագնահատման(գտնվելու վայրի)14-րդ գոտում,իսկ մնացած չորս համայնքները՝Վարդաձոր,Ծակքար,Լիճք և Ներքին Գետաշեն համայնքները ընդգրկվել տարածագնահատման(գտնվելու վայրի)15-րդ գոտու մեջ:Սահմանակից համայնքների համար տարբերակում մտցնելով՝ տարբեր տարածագնահատման (գտնվելու վայրի)գոտիներում ընդգրկելու պատճառով կիրառվող տարբեր գործակիցները առավել բարձր գոտում ընդգրկված համայնքների ազգաբնակչության մոտ բնականաբար առաջացնում են արդարացի

դժգոհություններ: Համայնքային սեփականություն հանդիսացող ու աճուրդային կարգով օտարման ենթակա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերը հնարավոր չէ նոր սահմանված գործակիցներով օտարել,որովհետև,նախ հողամասերը գտնվում են բնակելի կառուցապատման գոտուց բավականաչափ հեռու,ապահովված չեն գործող ենթակառուցվածքներով, հողամասերի գերակշիռ մասը քարքարոտ ու թեք ռելիեֆով տարածքներ են,և ամենակարևորը հողամասի պահանջատեր հանդիսացող ընտանիքները գտնվում են ֆինանսապես վատ վիճակում,նրանց սոցիալական վիճակը հնարավորություն չի տալիս ընտանիքի առօրյա հոգսերի հետ միասին ունենալ կուտակված միջոցներ,որով հնարավոր կլիներ մասնակցելու աճուրդային կարգով հողամասի ձեռք բերելու և սեփականատեր դառնալու համար:

Հարգելի պարոն Սանոսյան

Հաշվի առնելով վերոնշյալը,ելնելով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերի պահանջատեր կարիքավոր ընտանիքների սոցիալական վիճակից, դիմում ենք Ձեզ խնդրելով մանրակրկիտ ուսումնասիրելու մեր կողմից ներկայացված ուղերձը:Լիահույս ենք,որ Ձեր անմիջական գործուն աջակցությամբ համապատասխան պատկան մարմիններին ներկայացնելու ու միջնորդելու պարագայում՝ օրենսդրական փոփոխությունների կատարման արդյունքում կվերանայվի մեր համայնքի համար սահմանված տարածագնահատման(գտնվելու վայրի) գործակիցները: Վերանայման արդյունքում հնարավոր կլինի օտարված հողամասերից ստացված եկամուտների հաշվին կատարելու նոր ենթակառուցվածքների կառուցապատման,ինչպես նաև խթանելու նոր բնակելի թաղամասերի ձևավորմանը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 13-Ա

ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ՀԱՅՐ ԱՐՏԱԿ ՍՈՍԻ ՍՈԼԿԱՐՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝
Երանոս համայնքի ավագանին որոշում է՝

1.Երանոս համայնքի բնակիչ Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողի հայր Արտակ Սոսի Սոլկարյանին տրամադրել դրամական օգնություն 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՎԵՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՐԲԱՌՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՀԱՐԻԿՅԱՆ ՋԱՆԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԽԱՉԱԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՔՅԱՐԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 14-Ա

ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, << Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասով և 12-րդ հոդվածի պահանջներով՝
Երանոս համայնքի ավագանին որոշում է՝

1.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմին աշխատանքները կազմակերպել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Կարճ ժամանակահատվածում շտկել հաշվետվության մեջ արձանագրված թերությունները և խախտումները:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲԱՎԵՅԱՆ ԳԱԳԻԿ

ԲԱՐԲԱՌՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՀԱՐԻԿՅԱՆ ՋԱՆԻԿ

ՂԱՋԱՐՅԱՆ ԽԱԺԱԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՔՅԱՐԱՄՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ**

ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ-Ի ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1. Ներածություն

Հաշվետվությունը ներկայացվում է համայնքի ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին: Հաշվետվությունն ընդգրկում է 2020թ-ի ներքին աուդիտի հաստատված ծրագրով կատարողականը, որի նպատակն է կատարել համեմատություն ներքին աուդիտի պատասխանատուի կատարողականի և ներքին աուդիտի տարեկան ծրագրի միջև, բացահայտել ի հայտ եկած շեղումները և դրանց պատճառները:

2020թ-ի ներքին աուդիտի հաստատված ծրագրով կատարողականի և ներքին աուդիտի ծրագրի միջև շեղումներ չեն եղել: Ներքին աուդիտի հաստատված ծրագիրը ամբողջությամբ կատարվել է, ներկայացվել է Ներքին աուդիտի կոմիտեին:

Գլուխ 2. Կազմակերպության ներքին հսկողության գործընթացները

2020թ-ի ներքին աուդիտի հաստատված ծրագրով իրականացվել է 2 աուդիտորական առաջադրանք, որից 1 միավոր համայնքի ղեկավարի աշխատակազմում և 1 միավոր «Երանոսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ում:

Համայնքի ղեկավարի աշխատակազմում և «Երանոսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ում իրականացվել է՝

1. *Համակարգի գնահատման աուդիտ*
2. *Խորհրդատվություն*

Համակարգի գնահատման աուդիտի շրջանակներում իրականացվել է նաև ֆինանսական հաշվառման իրականացման գնահատում՝ ֆինանսական աուդիտ, համայնքի կողմից իրականացված տարբեր բնույթի ծախսումների գնահատում տնտեսման, օգտավետության և արդյունավետության առումով՝ կատարողականի աուդիտ, համայնքում առկա և գործող համակարգչային ծրագրերի մուտքագրվածության, տվյալների ամբողջականության, տարբեր ծրագրերում առկա անհամապատասխանությունների գնահատում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ, համայնքապետարանի կողմից իրականացված գործարքների գնահատում՝ օրենսդրական դաշտի պահանջներին դրանց համապատասխանությունը գնահատելու նպատակով՝ համապատասխանության կամ իրավական աուդիտ, ինչպես նաև գնումների ուսումնասիրություն գնման ընթացակարգերի և պայմանագրերի կատարման մասով՝ գնումների աուդիտ:

Իրականացված աուդիտի ընթացքում առկա են 12 միավոր առաջարկություններ, թերություններ և խախտումներ:

Ըստ կառուցվածքի այն ունի հետևյալ տեսքը՝

Համայնքի ղեկավարի աշխատակազմում՝

- *«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտում՝ 2 դեպք*
- *«Արխիվային գործի» մասին ՀՀ օրենքի պահանջների խախտում՝ 1 դեպք*
- *Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման օրենքի պահանջների խախտում՝ 1 դեպք*

«Երանոսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ում՝

- *Դրամական միջոցների փաստաթղթաշրջանառության խախտման՝ 1 դեպք*
- *Հաստիքային միավորի անարդյունավետ կիրառության՝ 1 դեպք,*
- *Փաստաթղթերի լրացման, բացթողումների՝ 2 դեպք,*
- *«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտում՝ 2 դեպք*

- *Ապրանքների և նյութերի շարժի, դուրս գրման փաստաթղթերի, կատարողական ակտերի կազմման, խախտման 2 դեպք:*

Հսկողության գործընթացի արդյունքում նշված 12 միավոր առաջարկություններից, թերություններից և խախտումներից կատարվել և վերացվել է 7 միավոր: 3 միավոր կատարման ընթացքում է, իսկ 2 միավորի կատարման համար սահմանվել է ժամանակացույց:

Հաշվետու ժամանակաշրջանում խորհրդատվության իրականացման շրջանակներում համայնքի աշխատակազմում առաջացած տարբեր բնույթի 2 հարցերի շուրջ իրականացվել է խորհրդատվություն, մասնավորապես

1. *Գնումների կազմակերպման և իրականացման ընթացքում առաջացած հարցերի պարզաբանում*
2. *Գնումների գծով խորհրդատվություն*

Գլուխ 3. Ներքին աուդիտի պատասխանատուի կատարողականը

1.Առաջադրանքի վրա ծախսված փաստացի և պլանավորված ժամաքանակներ

Ամփոփ

ժամ

2020թ.		Շեղում 2020թ-ի փաստ.նկատմամբ
Նախատեսված	Փաստացի	
480	256	224

2.Աշխատակիցների ծախսած ժամաքանակներ

ժամ

Անուն Ազգանուն	Նախատեսված	Փաստացի	Շեղում
Միշա Սահակյան	480	256	224

Աշխատաժամաքանակի շեղումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հաստատելու մասին» N 298-Ն որոշմամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքներին փորձագետներ չեն ներգրավվել:

3.Կազմակերպության կողմից լրացված և ներկայացված ստուգաթերթերի գնահատականներ

2020թ-ի ընթացքում ներքին աուդիտի հաստատված ծրագրով իրականացված աուդիտի 2 առաջադրանքի հետ մեկտեղ համայնքի աշխատակազմի քարտուղարի կողմից լրացվել, հաստատվել և ներքին աուդիտի պատասխանատուին է ներկայացվել 1 ստուգաթերթ: Պատասխանատուի կողմից ամփոփվել են ստուգաթերթի արդյունքները: Պատասխանատուի աշխատանքը 4 միավորանոց սանդղակով գնահատվել է 3 միավոր, որը կազմում է 75 տոկոս:

4.Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի ինքնագնահատման և արտաքին գնահատման արդյունքները

Պատասխանատուի կողմից վերլուծության են ենթարկվել ստուգաթերթերի միջոցով միավորների կողմից տրված գնահատականները, հնարավորինս բացահայտվել և բացառվել են ցածր գնահատականների պատճառները: Ինքնագնահատման գործընթացն իրականացվել է ներքին աուդիտի վերաբերյալ օրենսդրական դաշտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի հիման վրա կազմված ստուգաթերթերի միջոցով:
Հաշվետու ժամանակաշրջանում արտաքին գնահատում չի իրականացվել:

Գլուխ 4. Ամփոփագիր

2020թ-ի ընթացքում ներքին աուդիտի հաստատված ծրագրով իրականացվել է աուդիտի 1 առաջադրանք: Հաստատված ծրագրի և փաստացի իրականացված առաջադրանքների միջև շեղումներ չկան: Առաջադրանքների իրականացման ընթացքում շրջանակների սահմանափակումներ տեղի չեն ունեցել, խարդախության հայտանիշներ չեն հայտնաբերվել:

Գլուխ 5. Եզրակացություններ

Պատասխանատուի գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ ենք համարում և ակնկալում ենք Լիազոր մարմնի աջակցությունը հանրային հատվածի աուդիտորական գործունեության համապատասխան ձեռնարկների տրամադրման գործում: Այն հնարավորություն կտա պատասխանատուին կանոնավոր կերպով, իր աշխատանքային պարտականությունները կատարելիս, օգտվել վերանայվող և թարմացվող ներքին աուդիտի ձեռնարկներից:

Հավելված 10
ՀՀ ֆինանսների նախարարի
2012 թվականի փետրվարի 17-ի
N 143-Ն հրամանի

Լիազոր մարմնին ներկայացվող տարեկան ամփոփ հաշվետվության այլ բաղկացուցիչ աղյուսակներ
(ձևաչափ)

Կազմակերպության անվանումը — ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքի աշխատակազմ

ՀՎՀՀ — 08203757

Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար — Միշա Սահակյան

1. Ներքին աուդիտի ստորաբաժանման (ՆԱՍ) ներքին գնահատումներ

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1	Տվյալ տարվա աուդիտի առաջադրանքների արդյունավետության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 1-ի	3	3	3
2	Աուդիտի առաջադրանքների իրականացման որակի վերաբերյալ աուդիտի ենթարկվող միավորների կողմից տրված գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 13-ի մաս 2-ի	3	3	3
3	Ներքին աուդիտի ստորաբաժանման տվյալ տարվա աշխատանքների համապատասխանության գնահատման արդյունքները՝ համաձայն հավելված 14-ի (համապատասխանում է, մասամբ է համապատասխանում կամ չի համապատասխանում)	համապատասխանում է	համապատասխանում է	համապատասխանում է

2. Ներքին աուդիտորներ

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1	Ներքին աուդիտորների թվաքանակը, այդ թվում՝	1	1	1
1.2	*Որակավորված ներքին աուդիտորների թվաքանակը*	1	1	1
1.3	*Ուսուցանվող ներքին աուդիտորների թվաքանակը*			

3. Ներքին աուդիտի միջավայրի միավորները

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1	Կազմակերպության միավորների քանակ	3	1	1
2	Կազմակերպության գործառույթների քանակ	11	7	7
3	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների քանակ	1	1	1
4	Ներքին աուդիտի տարեկան ծրագրով նախատեսված միավորների գործառույթների քանակ	7	7	7
5	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների քանակ	2	1	1
6	Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի ենթարկված միավորների փաստացի գնահատված գործառույթների քանակ	9	7	7

4. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և խորհրդատվական ծառայությունների քանակներն՝ ըստ տեսակների

N	Փաստացի իրականացված աուդիտի կամ խորհրդատվական ծառայության տեսակները	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1	Համակարգի գնահատման աուդիտ	1	1	1
2	Կատարողականի աուդիտ			
3	Ֆինանսական աուդիտ			
4	Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ			
5	Համապատասխանության կամ իրավական աուդիտ	1		
6	Գնումների աուդիտ, այդ թվում՝	5	9	4
6.1	Գնումների բազային միավորի քանակապատիկը գերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	1	2	
6.1.1	Գնման ընթացակարգի մասով		1	
6.1.2	Պայմանագրի կատարման մասով	1	1	
6.2	Գնումների բազային միավորի քանակապատիկը չգերազանցող գին ունեցող գնումների աուդիտ, այդ թվում՝	4	7	4
6.2.1	Գնման ընթացակարգի մասով	2	4	3
6.2.2	Պայմանագրի կատարման մասով	2	3	1
6.3	Պետական, ծառայողական և բանկային գաղտնիք պարունակող գնումների, այդ թվում՝			
6.3.1	Գնման ընթացակարգի մասով			
6.3.2	Պայմանագրի կատարման մասով			
7	Խորհրդատվության մատուցում ղեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում	3	3	9
8	Օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում			
9	Տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն			
10	Այլ, այդ թվում՝			
10.1				
10.2				
10.3				
10.4				
10.5				
11	Ընդամենը	10	13	14

5. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից պլանավորված և իրականացված առաջադրանքների քանակը

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1	Տարեկան ծրագրով պլանավորված առաջադրանքների քանակ, այդ թվում՝	2	2	2
1.1	*աուդիտորական առաջադրանքների քանակ*	1	1	1
1.2	*խորհրդատվական ծառայությունների քանակ*	1	1	1
2	Փաստացի իրականացված առաջադրանքների քանակը, այդ թվում՝	6	8	10
2.1	*Աուդիտորական առաջադրանքների քանակ*	2	1	1
2.2	*խորհրդատվական ծառայությունների քանակ*	4	7	9

6. Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացված աուդիտի և արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկություններ

N	Նկարագիր	Ընթացիկ տարի	Նախորդ առաջին տարի	Նախորդ երկրորդ տարի
1	Վերջնական հաշվետվություններում ներկայացված անհամապատասխանությունների քանակ, այդ թվում՝	12	5	7
1.1	*Օրենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ*	6	4	5
1.2	*Կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմանների (պայմանագրեր, գերատեսչական նորմատիվային ակտեր և այլն) նկատմամբ*	6	1	2
2	Վերջնական հաշվետվություններում ներկայացված առաջարկությունների քանակ	12	5	7
3	Աուդիտորական առաջադրանքների արդյունքում կազմված գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների քանակը, այդ թվում՝	12	5	6
3.1	*Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում իրականացված միջոցառումների քանակը*	7	3	4
3.2	*Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետի խախտումով իրականացված միջոցառումների քանակը*			
3.3	*Գործողությունների ծրագրով սահմանված, սակայն չիրականացված միջոցառումների քանակը*	2		
3.4	*Գործողությունների ծրագրով սահմանված ժամկետում գտնվող միջոցառումների քանակը*	3	2	2
4	Առաջադրանքների արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների քանակը, այդ թվում՝	12	5	6
4.1	*Իրավապահ մարմիններին փոխանցված*	0		
4.2	*Ինքնուրույն կանխված*	12	5	6

Ներքին աուդիտի որակի երաշխավորման
հաշվետվություն

Կազմակերպության անվանումը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքի աշխատակազմ
ՀՎՀՀ - 08203757
Ներքին աուդիտի պատասխանատու՝ Միշա Սահակյան

1. Ներքին աուդիտի որակի երաշխավորման իրավական դաշտի առկայություն:

Ներքին աուդիտի որակի երաշխավորման իրավական դաշտի առկայության համար հիմք են հանդիսացել Երանոս համայնքի ներքին աուդիտի պատասխանատուի ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը, ներքին աուդիտի գործունեության կանոնակարգը: Նշված փաստաթղթերի նախագծերը կազմվել են պատասխանատուի կողմից, ներկայացվել համայնքի ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը: Քննարկման արդյունքում նշված փաստաթղթերը հաստատվել են պատասխանատուի կողմից և վավերացվել համայնքի ղեկավարի կողմից: Ներքին աուդիտի կանոնակարգով սահմանվել են ներքին աուդիտի նպատակը, դերը, լիազորությունները, պատասխանատվությունները, ներքին աուդիտի դերը ռիսկերի կառավարման, կառավարչական, ներքին հսկողության գործընթացներում, պատասխանատուի հարաբերությունները համայնքի ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի հետ, աուդիտի իրականացմանն առնչվող գրանցումների, ֆիզիկական գույքի նկատմամբ հասանելիության, աշխատակիցների հետ հաղորդակցվելու իրավունք,կազմակերպություններին մատուցվող խորհրդատվական և հավաստիացման ծառայությունների բնույթը:

Սահմանվել է պատասխանատուի գործունեության շրջանակը:

Պատասխանատուն գործում է համայնքի ղեկավարի անմիջական ենթակայությամբ, չի հանդիսանում համայնքի կառավարչական գործընթացի մաս կամ ռիսկերի կառավարման համար պատասխանատու, որով ապահովվում է ներքին աուդիտորների անկախությունը և օբյեկտիվությունը:

Պատասխանատուի կողմից ապահովվում է հնարավոր խարդախությունների մասին կասկածների կամ հայտնաբերման բոլոր դեպքերի մասին իրազեկում կազմակերպությունների ղեկավարներին, համայնքի ղեկավարին և Ներքին աուդիտի կոմիտեին:

Համայնքի ղեկավարի համապատասխան կարգադրությամբ ձևավորված է Ներքին աուդիտի կոմիտե: Կանոնավոր կերպով գումարվում են Ներքին աուդիտի կոմիտեի նիստեր, որը ղեկավարում է համայնքի ղեկավարը: Ներքին աուդիտի պատասխանատուի կողմից, որպես նիստի քարտուղար, Ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն են ներկայացվում իրականացված աուդիտի հաշվետվությունները, որի արդյունքում կայացվում է համապատասխան որոշում արձանագրված առաջարկությունների կատարման, թերությունների, խախտումների վերացման ուղղությամբ, տրվում են հանձնարարականներ:

Համայնքի Ներքին աուդիտի ընթացիկ գործունեությունն իրականացնում է և իրականացման համար պատասխանատվություն է կրում Ներքին աուդիտի պատասխանատուն, ով հաշվետու է համայնքի ղեկավարին և Ներքին աուդիտի կոմիտեին:

Ներքին աուդիտի պատասխանատուն կազմում և Ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանն է ներկայացնում համայնքի ներքին աուդիտի 3 տարվա ռազմավարական և տարեկան ծրագրերը, հաստատում դրանք և ներկայացնում համայնքի ղեկավարի կողմից վավերացմանը: Պարբերաբար ներկայացնում է ամփոփ տեղեկատվություն

կատարողականների վերաբերյալ, իրականացնում վերստուգման գործընթաց:

Աուդիտորական առաջադրանքի իրականացման փուլերում աշխատանքային խմբի ղեկավարի կողմից գնահատվում են աշխատանքային փաստաթղթերը, վերահսկվում աշխատանքների համապատասխանությունն առաջադրանքով սահմանված խնդիրներին և ժամկետներին: Ներքին աուդիտի պատասխանատուի կողմից աշխատանքների կատարման նկատմամբ իրականացվում է հսկողություն, ստուգաթերթերի կիրառման առկայության ապահովում: Համայնքի ղեկավարի, Ներքին աուդիտի կոմիտեի կարծիքների, դիտողությունների, եզրակացությունների հիման վրա իրականացվում է հետագա աշխատանքների կազմակերպման գործողություններ:

Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի ապահովման շրջանակներում և նպատակով առաջադրանքների իրականացման ավարտական փուլում աուդիտի ենթարկվող միավորներին տրամադրվում է առաջադրանքի իրականացման որակի վերաբերյալ ստուգաթերթ: Այն լրացվում է աուդիտի ենթարկվող միավորի կողմից և հաստատվում կազմակերպության ղեկավարի կողմից:

Ներքին աուդիտի պատասխանատուի կողմից վերլուծության են ենթարկվել ստուգաթերթերի միջոցով միավորների կողմից տրված գնահատականները, հնարավորինս բացահայտվել և բացառվել են ցածր գնահատականների պատճառները: Ինքնագնահատման գործընթացն իրականացվել է ներքին աուդիտի վերաբերյալ օրենսդրական դաշտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի հիման վրա կազմված ստուգաթերթի միջոցով:

Ներքին աուդիտի պատասխանատու՝ Մ. Սահակյան